

**«2021 Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ
ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈՒԼ**

«2020թ. ՀՀ լավագույն հաշվապահ» անվանակարգում հայտարարված մրցույթի 11-րդ պարբերաշրջանի 2-րդ ընտրական փուլին ներկայացվում է մեկ հարցաշար և մեկ խնդիր:

Հարցաշարը բաղկացած է 10 հարցից: Հարցաշարի ճիշտ պատասխանները գնահատվում են 2-ական միավոր, սխալ պատասխանները՝ 0 միավոր: Հարցաշարի առավելագույն միավորը կազմում է 20 միավոր:

Խնդիրը բաղկացած է 1 հարցից: Հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 10 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

Հարցաշարի և խնդրի ընդհանուր միավորների առավելագույն թիվը կազմում է 30 միավոր:

Երկրորդ փուլին ներկայացված հարցաշարից և խնդրից առավել բարձր միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

ՈՒՇԱՐՐՈՒԹՅՈՒՆ – Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, հաշվապահական հաշվառման միջազգային խորհրդանիշով ոսկեեզր շքանշանը, անակնկալ հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2022 թվականի փետրվարին՝ Ծաղկածորում:

**«2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ
ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈՒԼԻ**

ՀԱՐՑԱՇԱՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

1. Նշվածներից ո՞րն է համարվում հարկման բազա՝

ա) հարկման բազան վճարման ենթական հարկի գումարն է.

բ) սահմանված հարկատեսակով հարկի դրույքաչափն է.

գ) հարկման օբյեկտի արժեքային, ֆիզիկական կամ այլ բնութագիրն է:

2. Եթե անձը հանդիսանում է ՀՀ և ՌԴ քաղաքացի, ապա օրենսգրքի կիրառության իմաստով հանդիսանում է՝

ա) ՌԴ քաղաքացի.

բ) ՀՀ քաղաքացի.

գ) երկքաղաքացի:

3. Եթե ապրանքները մատակարարվել են Չինաստանից Վրաստան, ապա ապրանքի մատակարարման վայր նշված գործարքի մասով կհամարվի ՀՀ-ն, եթե՝

ա) ստացող իրավաբանական անձը ՀՀ ռեզիդենտ է

բ) մատակարարող իրավաբանական անձը ՀՀ ռեզիդենտ է

գ) երկուսը միաժամանակ ՀՀ ռեզիդենտ են,

դ) բոլոր պատասխանները սխալ են:

4. Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորությունների՝ իրական արժեքով վերաչափումից արժեքի նվազման արտացոլում՝

ա) Ղեբետ 517

Կրեդիտ 626.

բ) Ղեբետ 517

Կրեդիտ 322.

գ) Ղեբետ 517

Կրեդիտ 323:

5. Արտասովոր դեպքերի հետևանքների վերացման նպատակով օգտագործման ենթակա, որպես շնորհ ստացված դրամական միջոցների արտացոլում`

ա) Ղեբետ 252

Կրեդիտ 631.

բ) Ղեբետ 252

Կրեդիտ 421.

գ) Ղեբետ 252

Կրեդիտ 541:

6. Նախորդ տարում էական սխալի հետևանքով ավել ցույց տրված հասույթի գումարի ճշգրտում (թույլատրելի այլընտրանքային մոտեցման դեպքում)`

ա) Ղեբետ 711

Կրեդիտ 221.

բ) Ղեբետ 731

Կրեդիտ 221.

գ) Ղեբետ 741

Կրեդիտ 221:

7. Արտադրական գործունեության մեջ օգտագործելու պայմանով անհատույց ստացված հիմնական միջոցների հետ վերադարձի արտացոլում`

ա) Ղեբետ 721

Կրեդիտ 111.

բ) Ղեբետ 421

Կրեդիտ 111.

գ) Ղեբետ 728

Կրեդիտ 111:

8. ՀՀՄՍ 7 «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ստանդարտի համաձայն` արտադրական կազմակերպությունում նշվածներից որո՞նք են համարվում գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր`

ա) ապրանքների ձեռք բերման ժամանակ ակցիզային հարկի վճարումը.

բ) ծառայությունների մատուցումից դրամական միջոցների մուտքերը.

գ) հումքի, նյութերի գծով մատակարարին կանխավճարի տրամադրումը

դ) բոլոր վերը նշվածներն էլ համարվում են գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր:

9. ՀՀՄՍ 8 «Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ կամ վնաս, էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ» ստանդարտի համաձայն` հաշվետու ժամանակաշրջանի ծախսերը պետք է`

ա) ընդգրկվեն հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթը (վնասը) որոշելիս, եթե«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով առանձնահատուկ մոտեցում սահմանված չէ.

բ) պարտադիր ընդգրկվեն հաշվետու ժամանակաշրջանի գուտ շահույթը (վնասը) որոշելիս.

գ) ընդգրկվեն հաշվետու ժամանակաշրջանի գուտ շահույթը (վնասը) որոշելիս, եթե հաշվապահական հաշվառման ստանդարտներով չի պահանջվում կամ թույլատրվում դրանք ճանաչել ուղղակիորեն սեփական կապիտալում.

դ) ընդգրկվեն հաշվետու ժամանակաշրջանի գուտ շահույթը (վնասը) որոշելիս, եթե ծախսերը անհրաժեշտ են եկամտի ստացման համար և հիմնավորված են փաստաթղթերով:

10. ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ստանդարտի համաձայն՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ՝

ա) արտարժույթով դրամային և ոչ դրամային հողվածները պետք է ներկայացվեն (վերահաշվարկվեն)՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքը.

բ) արտարժույթով դրամային և ոչ դրամային հողվածները պետք է ներկայացվեն գործարքի օրվա փոխարժեքով.

գ) արտարժույթով դրամային հողվածները պետք է ներկայացվեն (վերահաշվարկվեն)՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքը, իսկ ոչ դրամային հողվածները պետք է ներկայացվեն գործարքի օրվա փոխարժեքով.

դ) արտարժույթով դրամային հողվածները պետք է ներկայացվեն գործարքի օրվա փոխարժեքով, իսկ ոչ դրամային հողվածները ներկայացվեն (վերահաշվարկվեն)՝ կիրառելով:

«2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ

ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈՒԽ

ԽՆԴԻՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ

«ԱԼՖԱ» կազմակերպության նախորդ տարվա իրացման շրջանառությունը կազմել է 28 մլն ՀՀ դրամ: Կազմակերպությունը զբաղվել է տնտեսական ապրանքների մանրամեծածախ առևտրով: 01.01.2021թ-ի դրությամբ չիրացված ապրանքների ձեռքբերման ԱԱՀ-ն կազմել է 2 000 հազ. ՀՀ դրամ:

1. Հունվար ամսվա ընթացքում իրացրել է 16 000 հազ. ՀՀ դրամի ապրանքներ, որից 12 000 ՀՀ դրամ մանրածախ եղանակով (ներառյալ ԱԱՀ), մնացածը մեծածախ եղանակով (առանց ԱԱՀ).

2. Նույն հաշվետու ժամանակաշրջանում անհատույց իրացրել է 8 000 հազ. ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) շուկայական արժեքով ապրանքներ, սակայն վաճառքն իրականացրել է 40 տոկոս զեղչված գնով, որը նշել է և հարկային հաշվով, և իրավական ակտով, ինչպես նաև նշում կատարելով, որ մատակարարված ապրանքներն իրացվում են անհատույց:

3. ԵԱՏՍ Երկրներից հունվար ամսին ներմուծել է 78 000 ռուբլի արժողությամբ ապրանքներ, որի տրանսպորտային ծախսը կազմել է 4500 ռուբլի:

1 ռուբլին=7 ՀՀ դրամ:

4. ՀՀ տարածքում նույն ամսին կատարել է ԱԱՀ-ով ձեռքբերումներ՝ 48 000 հազ ՀՀ ապրանքներ և ծառայություններ (ներառյալ ԱԱՀ), որոնց մասով հարկային հաշիվներն ստորագրել է մինչև 20.02.2021թ. -ը:

Լրացուցիչ տեղեկություն՝

2021թ-ի համար կազմակերպությունը որևէ հարկային համակարգում աշխատելու վերաբերյալ սահմանված ժամկետում հայտարարություն չի ներկայացրել, 2020թ. -ին հանդիսացել է շրջանառության հարկ վճարող:

Որոշել հունվար ամսվա վճարման/հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի չափը:

Խնդրի պատասխանը

Ա.Ֆ.Ա կազմակերպություն	Հունվար ամսվա ԱԱՀ-ի հաշվարկ		
	Հարկման բազա	ԱԱՀ Դեբետ	ԱԱՀ կրեդիտ
01.01.2021	Չիրացված ապրանքների ԱԱՀ	2000	
1.	12000		2000
	4000		800
2.	$8000 * 80\% = 6400$		1280
3.	$78000 * 7\% = 546000$	109200	
4.	48000	8000	
Հունվար ամսվա ԱԱՀ-վճարման/փոխհատուցման ենթակա գումար		115120	